Ձեռագրի բաժանումը կատարվել է 1828 թվականին կամ դրանից առաջ, բայց ոչ հետո։ «Շնորհօք սուրբ հոգոյն վերստին կազմեցան երկոքին սուրբ ճառքս, ի թուականիս Հայոց ՌՄՀԷ (1828)-ին... ձեռամբ Կիրակոս մեղապարտ վարդապետի Աղբեցոյ և տիրացու Սահակին... որ բազում աշխատութեամբ հազիւ կարացաք զսա վերստին կազմել»[6]։

Առաքելոց վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետ Մուրադյանը, հաստատելով, որ «մատեանս խիստ ծանր և դժուարաշարժ լինելոյ պատճառաւ երկու հատոր արարեալ և կազմեալ է Կիրակոս վարդապետ Աղբեցի ՌՄՀԷ (1828) թուոյն հայոց»[7], ավելացնում է. «1892 թ. մայիսի 4-ին սկսայ կարգաւ գրել զթուանշան թղթոց երկու կազմեալ ճառիցս, առաջինն է 648 երես (գրված է 649, որ չէր կարող լինել. ձեռագրի վերջին էջում՝ 648 է), իսկ երկրորդն է 564»[8]։ Այս էջակալումներից ստացվում է 324+282=606 թերթ։ Այդ քանակին ավելացնելով առաջին մեկ թերթը, որ էջակալված չէր, կստանանք 607։ Էջակալումից հետո կորել է դարձյալ 7 թերթ։ Բարեբախտաբար մնացել են Տօնականի համարյա բոլոր պրականիշերը, որոնցով հնարավոր է վերականգնել ձեռագրի սկզբնական թերթաքանակը և կորած թերթերի քանակը։ Մշո Տօնականում պրակները նշանակված են հայոց այբուբենի տառերի հերթականությամբ։ Երեսունվեցերորդ պրակը նշանակելուց հետո միայն, շարունակվում է տառերի թվային արժեքով՝ ԼԷ, ԼԸ... մինչև ՁԳ(83), որը վերջին պրակն է։ Ամեն մի պրակ բաղկացած է 8 թերթից, բացառությամբ մի քանիսի։ Առաջին պրականիշը՝ Ա-ն, դրված է երրորդ թերթի ստորին լուսանցքում, խորանաձարդ էջի վրա, ուր Տօնականի բնագրի սկիզբն է։ Պրակից դուրս են առաջին երկու թերթերը։ Վերջին պրակի առաջին թերթի մի երեսում ավարտվում է Տօնականը և սկսվում Առաքելոց վանքում գրված հիշատակարանը։

Ձեռագրի 83 պրակներից տասական թերթ ունեն Ռ և Ս պրակները, յոթ թերթ՝ ՁԲ պրակը, վեցական թերթ՝ Տ, ԽԵ, ԿԸ, ՀԵ և ՁԳ պրակները, մնացած 75 պրակները ութական թերթից են բաղկացած։ Պրակների և թերթերի ընդհանուր գումարը 657 է, ավելացրած սկզբի 2 թերթը և երկու թերթ ԽԴ պրակից, որ առաջին կեսին է միացած, կստանանք 661 թերթ։ Այդ ընդհանուր քանակից պակասում է 61 թերթ, և բոլորի հետքերը երևում են. այսպես, մեկական թերթ է պակասում Բ, Դ, Ե, Լ, Մ, Ն, Շ, Ո, Ջ, Ռ, Ց, ԽՁ, Ծ, ԾԱ, ԾԲ, Կ, ԿԳ, Հ, ՀԳ պրակներից, երկուական թերթ՝ Ա, Փ, ԽԹ, ՀԴ, ՁԳ պրակներից, երեք թերթ՝ ԽԵ պրակից, հինգ թերթ՝ Ի պրակից և Ը, ԿԱ, ԿԲ պրակները՝ ամբողջությամբ։ Այժմ ձեռագիրն ունի 661—61=600 թերթ։ 61 կորած թերթերից 16-ը Վենետիկում է, բոլորովին անհետ կորել է, հավանաբար, 45 թերթ։

մարում հիշյալ նյութը չգտանք, Ա. Մ.)։ Այդ թերթերից կազմված ձեռագիրը Վենետիկի Մխիթարյան մատենադարանում կրում է 614 համարը, իսկ Ցուցակում՝ 229։ Այս թերթերից 14-ը ձեռագրի մագաղաթյա թերթերն են, իսկ 15, 16, 17 թերթերը թուղթ են, որոնք, հավանաբար, հետագայում կորած երկու պակաս թերթերի ընդօրինակություններն են, գրված բոլորգրով։

6 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602բ։ «Հին հայկական մանրանկարչություն» 1952 թ. տպագրված ալբոմի մեջ ձեռագրի կիսվելու մասին արված ենթադրությունը ճիշտ չէ (տե՛ս անդ, նկ. 13-ի բացատրության ծանոթագրությունը)։ Ձեռագիրը Առաքելոց վանքից 1915 թ. հանելու ժամանակ, ամենայն հավանականությամբ, անջատել են նրա կազմերը, տեղափոխելու դյուրության համար։

7 Անդ, էջ 9ա։

8 Անդ։